**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Ե/651-25** **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**

20 Մարտի, 2025թ.

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ**
**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Եղիազարյան,**

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնում է մշտադիտարկում, որի շրջանակներում 2025 թվականի մարտի 14-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված Ապարանի համայնքապետարանի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ գնումների մասին օրենսդրության պահանջներին:

Մասնավորապես, Հրավերում թիվ 1-ին, 2-րդ, 41-րդ, 42-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ և 53-րդ չափաբաժիններում ներկայացված գնման առարկաների տեխնիկական բնութագրերում չեն պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված պայմանը:

Միաժամանակ, համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի՝ *<u>գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին,</u>*

*էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին,* ***բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:*** *Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել և Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հրավերում կատարել փոփոխություններ՝ ձեռնարկված քայլերի մասին տեղեկացնելով Ծառայությանը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ**
**ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

*Կատարող՝* *Անի Ախոյան*
*Ստորաբաժանում՝* *Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
*Հեռ.՝* *010 31 31 82*